

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԱՂՕԹՔԸ Ի ԶՈՒՐ Զ'ԵՐԹԱՐ

Մէկը ինծի ըսաւ.. «Այս ինչ մարդը ինծի թշնամի է, քսան տարի է որ կ'աղօթեմ, որ փոխուի եւ չի փոխւիր, այլ'տք է շարունակեմ աղօթել իրեն համար»: Իրեն ըսի. «Դուն շարունակե աղօթել, ինք կրնայ չփոխուիլ եւ իր թշնամութենէն չհրաժարիլ, բայց դուն ամբողջ կեանքդ թշնամիդ աղօթելէ ետք՝ կրնաս սրբանալ: Աղօթքը կրնայ ուրիշը չփոխել, բայց անկարելի է որ քեզ չփոխէ»:

+++++

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹՆԵՔ

Տէ՛ր, վտակներու աղբիւր բխեցո՛ւր գլուխէս եւ ռոռզէ՛ մտքերուս անդաստանը, լուս՛ յանցանքներուս աղտը ու սրբէ՛ վերքերուս թարախը, հանէ՛ մեղքերուս փուշը եւ տնկէ՛ կեանքի բոյսը: Տէ՛ր, աճեցո՛ւր արդարութիւնը եւ նուաստացո՛ւր անօրէնութիւնը, մեռցո՛ւր մարմնի ցանկութիւնը եւ նորոզէ՛ հոգիիս կենդանութիւնը:

Հալածէ՛, Տէ՛ր, բազում ախտաժէտութիւններս, մարմինիս ցաւերն ու հոգիիս աղտերը, գլխուս քունը եւ ոսկորիս յագեցումը: Խորհուրդներս պահէ՛ անըզբաղ, սիրտս՝ սուրբ, միտքս՝ լուսաւոր ու զգաստ, ցանկութիւնս՝ դէպի Զեզի եւ յօժարութիւնս՝ օր ու գիշեր աղօթքի մէջ:

Եփրեմ Ասորի

ԵՔԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

**ԵՔԷ ՄԻՐՏԴ ԱՍՏՈՒԾՈՅ
ՀԱՆԴԵՊ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԱՄԲ
ԼԵՅՈՒՆ Է ԵՒ Կ՛ՈՒԶԵՍ ԶԻՆՔ
ԳՈՒՂԱԲԱՆԵԼ, Կարդա՛ Սաղմոս 30
+++++**

Կը փառաբանեմ քեզ, Տէ՛ր, որովհետեւ զիս ազատեցիր եւ թոյլ չտուիր, որ թշնամիներս ինդան իմ վրաս: Տէ՛ր, իմ Աստուածս, քեզ օգնութեան կանչեցի եւ դուն զիս բժշկեցիր: Զիս մահուանէ ետ կեանքի բերիր, երբ մահուան փոսը կ'իջնէի: Տիրոջ ներքո՛ղ երգեցէք, դու՛ք՝ անոր հաւատարիմները: Գոհաբանեցէ՛ք անոր սուրբ անունը: Միայն վայրկեան մը կը տեսէ անոր սաստիկ բարկութիւնը, մինչդեռ անոր հանութիւնը ամբողջ կեանք մը կը տեսէ նիշտ ինչպէս, որ իրիկուան հետ լացն ու արցունքը կը դադրին, եւ առաւօտը կը բացուի ուրախութեամբ: Լաւ օրերուս կը խորհէի, թէ որեւէ բան չի կրնար զիս սասանել: Դո՛ւն է, որ Տէ՛ր, հանութեամբդ զիս լեռան պէս անշարժ ըրիր: Հազիւ երեսդ դարձուցիր՝ ահա խոռովի մատնուեցայ: Տէ՛ր, կ'աղաչեմ, կը պաղատի՛մ, Տէ՛ր: Ի՞նչ կը շահիս իմ մահովս, եթէ գերեզման իջնեմ: Միթէ փոշի դառնալէ ետք կրնա՞մ քեզ գոհաբանել, կամ կրնա՞մ պատմել հաւատարմութիւնդ: Լսէ՛, ո՛վ Տէ՛ր, որդրմէ՛ ինծի. Տէ՛ր, օգնակա՛ն եղիր ինծի:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍՍ.ՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- *facebook-ի էջ jerak ճրագ թերթ*



ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020 ԹԻՒ 40

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀՎԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 17.7-14: Բ. Կո. 13.5-13
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 11.27-33**

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան:
Մինչ Յիսուս տանարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները եւ հարցուցին. *«Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»:*

Յիսուս անոնց պատասխանեց. *«Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ, թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ՞ տրուած էր իրեն՝ թէ մարդոցմէ: Պատասխանեցէ՛ք տեսնեմ»:*

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. *«Եթէ ըսնեմ՝ Աստուծմէ տրուած էր, մեզի պիտի ըսէ ինչո՞ւ չհաւատացիք իրեն, իսկ մարդոցմէ էր չեմք կրնար ըսել: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախճալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր, թէ Յովհաննէս նշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Ձեմք գիտեք»:*

Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. *«Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:*

ԿԸ ՀԱՒԱՏԱ՞Ս...

Մարկոս Աւետարանը կը պատմէ մեզի, թէ ի՞նչպէս քահանայապետները եւ օրէնքի ուսուցիչները մօտեցան Յիսուսի գինք փորձելու համար եւ ժողովուրդը կասկածամիտ դարձնելու նպատակով սկսան անտեղի հարցումներ ուղղել իրեն ըսելով, թէ իր իշխանութիւնը ուրկէ է քաջ գիտնալով, թէ անիկա Աստուծոյ Որդին է եւ երկինքէն իջած փրկիչն է: Այսօր կա՞ն անհաւատ մարդիկ, որոնք կասկածը ունին Յիսուսի իշխանութեան վրայ, չի բաւեր բարձրաձայն յայտարարել այլ պէտք է ընդունիլ Քրիստոսը մեր կեանքերէն ներս բանալ մեր Սիրտերը Յիսուսի եւ մեր գործերու նամբով ցոյց տալ Քրիստոսի իշխանութիւնը եւ ներկայութիւնը մեր կեանքին մէջ:

**ՄԱՐԳԱՐԵԱՎԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎԱՎԿԱՆԵՐ**

**ԵՍԱՑԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐԿԷՆ
17.7-14**

Երբ այն օրը գայ, մարդը իր արարիչին միայն պիտի յուսայ, իր աչքերը Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յառնէ:

Այլեւս իր յոյսը պիտի չկապէ մեհեաններուն կամ իր ձեռագործ չաստուածներուն: Մարդիկ միայն Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յուսան: Այլեւս իրենց աչքերը պիտի չյառեն իրենց գարշելի չաստուածուհիին փայտէ արձանիկներուն:

Այն օրը քաղաքները պիտի լժուխն եւ աւերուին, այնպէս՝ ինչպէս պարպուեցան Ամփոհացիներուն եւ Խեւացիներուն քաղաքները Իսրայելացիներուն յարձակումին դիմաց, քանի որ դուն լժեցիր զԱստուած, քու փրկիչդ, եւ մոռցար Տէրը, քու օգնականդ: Արդ, քանի որ քու տնկած պարտէզդ եւ ցանած սերմերդ օտար չաստուածներուն նուիրւած են, ինչ որ ալ տնկես, եւ նոյնիսկ եթէ ցանածդ նոյն օրն իսկ ծաղկի՝ հունձիս արդիւնք պիտի չունենաս: Այն օրը Աստուած հօր մը պէս իր ժառանգութիւնը պիտի բաժնէ, եւ դուն որպէս հասուցում՝ տրամութիւն պիտի ունենաս:

Վա՛յ բոլոր այն ազգերուն որոնք ալեկոծ ծովու մը պէս Աստուծոյ դէմ կը մոլեգնին եւ որոնք ալիքներու նման կը շառաչեն:

Նոյնիսկ եթէ ծովերուն պէս անհամար ըլլան անոնք, ովկիանոսի ալիքներուն սաստկութիւնն իսկ ունենան՝ սակայն Աստուած պիտի նզովէ ու ցրուէ զանոնք այնպէս՝ ինչպէս հովը կը փշէ յարդին շիւղը, ինչպէս մրրիկը կ'ալէ կառքերուն հանած փոշին:




**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԻ
ՆԱՄԱԿԸ
ԿՈՐԻՆՏԱՑԻՆԵՐՈՒՆ
13.5-13**

Քննեցէ՛ք դուք ձեզ տեսնելու համար, թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ: Քրիստոսի ներկայութիւնը կը զգա՞՞ք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէ՛ք: Յուսամ գիտէ՛ք, թէ մենք այդ փորձը յաջողապէս կատարած ենք: Եւ կը խնդրենք Աստուծմէ, որ չարիք չգործէ՛ք: Ասիկա ըսելով չենք ուզեր մենք մեզ ընտիր ցոյց տալ: Ընդհակառակը, կ'ուզենք որ դուք բարին գործէ՛ք, նոյնիսկ մեզ ամօթով ձգելու չափ: Որովհետեւ Աստուծոյ նշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ՝ կրնանք միայն անոր համար աշխատիլ: Ուրախութեամբ յանձն կ'առնենք տկարանալ, միայն թէ դուք զօրանաք: Ուստի կ'աղօթենք, որ հետզհետէ կատարեալ ըլլաք: Ասիկա հեռուէն կը գրեմ ձեզի, որպէսզի երբ գամ՝ պէտք չունենամ խստութեամբ վարուելու ձեզի հետ ա՛յն իշխանութեամբ որ Տէրը ինձի տուաւ ուղղելու համար եւ ո՛չ թէ պատժելու:

Կը փակեմ նամակս, եղբայրներ: Ողջ եղէ՛ք: Կատարեալ ըլլալու աշխատեցէ՛ք. միտքարուեցէ՛ք: Համերաշխ եւ խաղաղութեամբ ապրեցէ՛ք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ



Տասներկու աշակերտներու կողքին, Յիսուս նաեւ կ'ընտրէ 72 աշակերտներ եւ կու տայ անոնց նոյն իշխանութիւնը, զոր տուած էր իր տասներկու աշակերտներուն, աւետարանը քարոզելու, դեւեր հանելու եւ հիւանդներ բժշկելու:

72 աշակերտներուն անունները որեւէ տեղ չեն յիշուիր, սակայն անոնք եւս Քրիստոսի կողմէ առաքելութեան կը ղրկուին զանազան շրջաններ:

Տասներկու առաքեալներու եւ 72 աշակերտներու նախատիպը կը գտնենք Հին Կտակարանին մէջ, երբ երբայցեցի ժողովուրդը անապատային թափառումներու ընթացքին կը հասնին Եղիմ, այնտեղ կը գտնեն 12 աղբիւրներ եւ 72 արմաւենիներ եւ այնտեղ բնակութիւն կը հաստատեն (տե՛ս Ելք 15.27):

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Վ Ե Ր Ա Ն Ո Ր Ո Գ Ո Ւ Մ

ԱՂՕԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Այսօր շատ մարդիկ օրը քանի մը վայրկեան հապճեպ կերպով կ'աղօթեն եւ իրենց ըրածին անունը կը դնեն աղօթք: Ուրիշներ երբ խաչակնքեն կը խորհին, որ անիկա աղօթքի պահը կը փոխարինէ: Տակաւին կան անոնք, որոնք երբ օրուան ընթացքին «Տէր Յիսուս» բառը արտասանեն տունէն դուրս ելած ատեն կամ գործի գացած ժամանակ կը կարծեն, որ իրենց ըրածը աղօթք է: Կան նաեւ մարդիկ, որոնք սուրբ Պատարագի ներկայ ըլլալը աղօթք կը նկատեն: Այս բոլորը սակայն աղօթքի աղբատագոյն երեսները կը ներկայացնեն եւ շատ հեռու են ճշմարիտ աղօթք նկատուելէ: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ օրը քսան անգամ խաչակնքել եւ հարիւր անգամ Յիսուսը խաչել իր մեղքերով: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ օրը յիսուն անգամ «Տէր Յիսուս» բառերը կրկնել, առանց սակայն Յիսուսը իբրեւ Տէր ունենալու իր սրտին մէջ: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ սուրբ Պատարագին գալ, եւ սակայն ռեւէ հաղորդակցութիւն չունենալ Աստուծոյ պատարագուած գառնուկին հետ: Ուստի պէտք է վերանորոգենք աղօթական մեր կեանքը: Պէտք է խնդրենք Սուրբ Հոգիէն, որ մեզի հետ աղօթէ եւ մեզի աղօթել սուրբացնէ (Յդ. 20: Հռ. 8.26: Փլ 1.19): Երբ Սուրբ Հոգին ինք ըլլայ աղօթքի ժամանակ մեր առաջնորդն ու ուսուցիչը, այն ատեն աղօթքի ժամանակ պիտի չուզենք Տիրոջմէ, այլ՝ Տէրը պիտի ուզէ: Տիրոջ ձեռքին պիտի չնայինք, այլ՝ անոր սիրտին: Տիրոջ պարգեւները պիտի չըլլան մեր հետաքրքրութեան նիւթը, այլ՝ անոր սէրն ու քաղցրութիւնը: